№ 116 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8 1894 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8 № 116

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամեան-Յովհաննեան դպրոցի հոգաբարձական խորհուրդը պատիւ ունի յայտնելու, որ հոկտեմբերի 9-ին, կիրակի օր, Կուսանաց վանքի եկեղեցում կատարվելու է նոյն դպրոցի հանգուցեալ բարեյիշատակ հոգաբարձու

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԽԱՏԻՍԵԱՆՑԻ

հոգեհանգիստը։—Պատարագի սկիզբն է առաւօտեան 11 ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատրիարքական ընտրութիւն. Դասագրքեր չեն, այլ տանջանք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկերութեան ճիւղեր։ Քաղաքային դպրոցները. Առօրեայ երևոյթներ. Նոր կանոններ. Նամակ Գօրիսից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եպիսկոպոսական պատերազմը. Պատեհօրի Նամակը. Իրլանդական հարցը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլսի պատրիարքական տեղապահի ընտրութիւնը մեզ առիթ տուեց կարծելու, որ ազգային ժողովի դադարած գործունէութիւնը կը վերսկսվի, և թիւրքահայոց սահմանադրութեան կանոնների համաձայն՝ տեղի կունենայ պատրիարքի ընտրութիւնը։

Սակայն վերջին թղթակցութիւնը Կ. Պոլսից, որ տպագրվեց մեր լրագրի անցեալ համարում, բոլորովին ուրիշ կերպ է նը-կարագրում այն տրամադրութիւնը, որ այժմ տիրում է Կ. Պոլսում։ Ոչ Հմայեակ եպիսկոպոսը և ոչ էլ նրա շրջապատողները, խորհրդատուները և հովանաւորողները դեռ մի որոշ, մի դրական քայլ չեն արել ազգային ժողովի գումարման համար։ Այդ բաւական չէ. մտադրութիւն կայ ազգային ժողով չը գումարել, այլ դիմել երեսփոխաններին, որ նրանք իրանց ձայնը գրաւոր կերպով ուղարկեն պատրիարքարան, և ապա այդ գրաւոր ձայների համեմատ՝ ամենից շատ ձայն ստացողը պատրիարք համարվի։

Լաւ է այդ ձևը, թէ վատ, այդ մեզ չէ հետաքրքրում. մեզ հետաքրքրողը այն հարցն է, որ այդ ձևը դէմ է սահմանադրութեան, հակառակ է սահմանադրութեան յօդուածներին, ուրեմն և անկանոն, ապօրինի։

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ էլ ինքը թիւրքաց կառավարութիւնը ընդունում է սահմանադրութեան գոյութիւնը և մինչև այժմ ոչ ազգային ժողովը, ոչ էլ մի ուրիշ հիմնարկութիւն ոչ մի փոփոխութիւն չեն արել սահմանադրութեան մէջ։ Արդ, թէ օրէնքի, թէ լոգիկայի և թէ արդարութեան տեսակէտից պատրիարքի ընտրութիւնը պէտք է լինի այն եղանակով, ինչ եղանակով տրամադրում է սահմանադրութիւնը,—այսինքն՝ գումարել ազգային ժողով, և ներկայ եղող երեսփոխանների ձեռքով, գաղտնի քուէարկութեամբ կատարել պատրիարքի ընտրութիւնը։

Սահմանադրութիւնը թոյլ չէ տալիս, և երբէք էլ չէ պատահել, որ փոխանակ ազգային ժողով գումարելու, գրաւոր կերպով, ուրեմն բաց քուէարկութեամբ, պատրիարքի ընտրութիւն լինէր։ Այն ժամանակ է՛լ ինչ միտք ունէր ընդունել գաղտնի քուէարկութեան սկզբունքը, ի՞նչ միտք ունէր՝ օրէնք դնել, որ ամեն մի վիճակ ունենար իր երեսփոխանը, իր ներկայացուցիչը ազգային ժողովի մէջ։

Երեսուն տարիներից ի վեր գոյութիւն ունեցող սահմանադրութիւնը պահանջում է, որ պատրիարքի ընտրութիւն կատարվի երեսփոխանների ձեռքով, ազգային ժողովով, գաղտնի քուէարկութեամբ. և եթէ այսօր թոյլ տրվի, որ փոխանակ ազգային ժողով գումարելու և գաղտնի քուէարկութիւն անելու երեսփոխանները իրանց գրաւոր ձայները ուղարկեն, դա կը նշանակէ խախտել գոյութիւն ունեցող օրէնքը, կը նշանակէ խախտել սահմանադրութիւնը։

Մենք շատ բան չենք սպասում և չենք պահանջում այժմեան տեղապահ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանից և նրա բարեկամներից. մենք միայն պահանջում ենք, որ օրէնքով գործ կատարեն և դուրս չը դան սահմանադրութեան շրջանից։

Իսկ օրէնքը պահանջում է ազգային ժողով գումարել և ազգային ժողովով կատարել պատրիարքի ընտրութիւնը։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ՉԵՆ ԱՅԼ ՏԱՆՋԱՆՔ

—

Ով փոքր ի շատէ ծանօթ է մեր դպրոցական կեանքին, ով փոքր ի շատէ տեղեկութիւն ունի մեր դպրոցական գրականութեան, կամ ուրիշ խօսքերով՝ ուսումնարաններում գործ դրվող դասագրքերի մասին,—նա անկասկած շատ լաւ գիտէ, թէ ինչ տանջանք են պատճառում թէ վարժապետներին և թէ աշակերտներին այն դասագրքերից շատերը, որոնք գործ են դրվում հայոց ուսումնարաններում, և կամ հաւանութիւն են գտնում ուսումնարանական յանձնաժողովից...

Դրանք դասագրքեր չեն, այլ տանջանքի աղբիւր։—ոչ երեխաների զարգացման չափը, ոչ տարիքը, ոչ տեղական հանգամանքները, ոչ լեզուաբանական որ և է պայման, մի խօսքով ոչ մի մանկավարժական թէորիա, ոչ մի հոգեբանական պայման ի նկատի չեն առնում այն մարդիկ, որոնք առանց մանկավարժութեան հետ ծանօթ լինելու՝ հրապարակ են գալիս և դասագրքեր են կազմում խեղճ հայոց դպրոցների համար։

Մի բան միայն լաւ գիտեն այդ գրաչարչիները.—որ դասագիրքը աշխատանք է տալիս և ձեռնտու գործ է։ Այդ արդէն բաւական է.—գողացաւ սրանից-նրանից մի քանի յօդուած, արտագրեց զանազան գրքերից ոտանաւորներ, հատուածներ, վրան էլ աւելացրեց մի քանի անմիտ բաներ, շատ անգամ հետն էլ մի քանի անճոռնի նկարներ,—ահա դասագիրքը պատրաստ է. մնում է էջմիածնի դպրոցական իշխանութեանը խնդրել, որ այդ գիրքը դասագրքերի ցուցակի մէջ մտցնվի. այդ էլ դժուար չէ։ Եւ այդպիսով խեղճ մանուկների տանջանքի գէնքերի վրա անդադար աւելանում է էլի մէկը, էլի միւսը, երրորդը, տասներորդը...

Եւ ճշմարիտ, դասագրքեր ինչքան կամենաք ունենք. ամեն մի ցանկացող դասագրքեր է կազմում. հայերէն չիմացողը՝ հայերէնի դասագիրք, ռուսերէնին անծանօթը՝ ռուսերէնի դասագիրք, հայոց լեզուի ուսուցիչը՝ թուաբանութեան դասագիրք.—անդադար տպագրվում են, մէկը միւսի ետևից նորերն են լոյս տեսնում, բայց և այնպէս մեր դպրոցները շատ քիչ օրինաւոր դասագրքեր ունեն և լաւ դասագրքերի մեծ պահանջ կայ։

Կարծում ենք, որ տարբական ազնուութիւնը պահանջում է, որ փող վաստակելու համար զանազան զրաչարչիները ուրիշ ասպարէզ ընտրէին, և մի քանի կոպէկների համար անտեղի տանջանք չը պատճառէին անմեղ մանուկներին, վնասելով ուսման գործին...

Եւ եթէ էջմիածնի դպրոցական վարչութիւնը ինքը ընդունակ չէ դասագրքերի ընտրութիւն անելու, գէթ ձեռնհաս անձանց յանձնէր այդ գործը, և կամ թոյլ տար, որ դպրոցները իրանք ընտրութիւն անեն, ինչպէս այդ առաջ էր լինում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԵՐԸ

—

Ինչպէս յայտնի է, Կովկասեան Բարեգործական Ընկերութիւնը՝ իր կանոնադրութեամբ, որ հաստատվել է 1881 թ-ին, կառավարութիւնից իրաւունք էր ստացել բանալ զանազան քաղաքներում իր ճիւղերը և մասնաճիւղերը։ Ճիւղեր բանալու իրաւունքը պատկանում էր խորհրդին, որը պարտաւոր էր ամեն անգամ, որ և է ճիւղ բանալիս՝ տեղեկացնել կառավարութեան ներկայացուցիչներին՝ նահանգապետներին։

Այժմ ընկերութեան կանոնադրութեան այդ կէտը ենթարկված է փոփոխութեան։

Բարձր կառավարութիւնը հարկաւոր համարեց փոխել կանոնադրութեան այդ կէտը, այնպէս որ Ընկերութեան խորհուրդը այլ ևս իրաւունք չունի ինքն իր կողմից նոր ճիւղեր բանալ կամ հիմնել։

Կովկասեան կառավարչապետի դիւանատան կողմից այդ մասին պաշտօնապէս յայտարարված է ընկերութեան խորհրդին և առաջարկված է, համաձայն բարձր կառավարութեան կարգադրութեան, կանոնադրութեան այդ կէտին վերաբերեալ յօդուածները համարել այլ ևս գոյութիւն չունեցող։

Այժմ պէտք է տպագրվի ընկերութեան կանոնադրութիւնը, որը սպասված էր, ի հարկէ, առանց այն յօդուածների, որոնք վերաբերում են ճիւղեր բանալուն։

Մենք հարկաւոր համարեցինք հաղորդել այդ տեղեկութիւնները, որպէս զի զանազան քաղաքներում, ուր գուցէ կը ցանկանային ճիւղեր ունենալ և կամ դիմում են ընկերութեան՝ թոյլատրութիւն խնդրելով, տեղեակ լինեն այդ փոփոխութեան։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

—

Ներկայումս Թիֆլիսի քաղաքային դումայի հերթական ամենալուրջ խնդիրներից մէկն է քաղաքային դպրոցների հարցը։ Ինչպէս յայտնի է, քաղաքային երեք նոր դպրոցներ բանալու առիթով տարաձայնութիւններ սկսվեցին քաղաքային ինքնավարութեան և ժողովրդական դպրոցների դիրեկտորի մէջ։ Վիճելի հարցը ներկայ դէպքում այն է, թէ արդեօք քաղաքային դպրոցները ենթարկվում են մասնաւոր դպրոցների համար սահմանված կանոններին, թէ, ինչպէս ժողովրդական դպրոցների դիրեկտորը հաստատում է, քաղաքային դպրոցները պէտք է ենթարկվեն հասարակական դպրոցների համար որոշված կանոններին։

Թէ քաղաքային դումայի ուսումնարանական մասնաժողովը, թէ դումայի ձայնաւորներից ընտրված իրաւաբանները և թէ ժամուլը, մանրամասն քննութեան ենթարկելով այդ հարցը, ապացուցանում են, որ քաղաքային դպրոցները պէտք է մասնաւոր դպրոցների կանոններին ենթարկվեն, և ոչ թէ հասարակական, որովհետև ինքն ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, հաստատելով 1880 թ-ին քաղաքային առաջին դպրոցի ծրագիրը, որի հիման վրա դպրոցը բացվում էր տղաների համար, դասատուութեան առարկաներն էին՝ կրօն, ռուսաց լեզու, վրաց և հայոց լեզու (վրացիների և հայերի համար), վերջաբանութեան մէջ ասում է. «առհասարակ, ամենայն կողմից, նա (այսինքն առաջին դպրոցը) պէտք է ղեկավարվի կովկասեան ուսումնարանական շրջանի մասնաւոր դպրոցների համար սահմանած կանոններով»։ Ուրեմն ինքն ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դասում էր այդ դպրոցները մասնաւոր դպրոցների շարքում։

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորը 1894 թ-ի սեպտեմբերի 5-ին ուղարկեց մի գրութիւն քաղաքային վարչութեանը, որով տեղեկացնում էր քաղաքագլխին, թէ քաղաքային դպրոցները չեն կարող մասնաւոր համարվել կառավարչական սենատի այն ուկազի հիման վրա, որ հրատարակվեց 1893 թ-ի նոյեմբերի 3-ին՝ Թիֆլիսի քաղաքային վարչութեան և ուսումնարանական շրջանի մէջ ծագած տարաձայնութեան պատճառով։

Սակայն դիրեկտորի բերած այդ ապացոյցը, քաղաքային դպրոցական մասնաժողովի կարծիքով, սխալ է։ Նա ասում է, որ սենատը, յիրաւի, ուշադրութեան առաւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի եզրակացութիւնը այն բանի մասին, թէ քաղաքային դպրոցները մասնաւոր չեն, այլ հասարակական, բայց մի և նոյն ժամանակ չը քանդեց քաղաքային դործերի վերաբերմամբ Թիֆլիսի նահանգական վարչութեան այն որոշումը, որով քաղաքային դպրոցները համարվում են մասնաւոր, և որոնք պարտաւոր են ղեկավարվել Կովկասի համար սահմանված առանձին կանոններով։

Ահա այդ հարցը պէտք է լիներ Թիֆլիսի դումայի վերջին նիստի քննութեան առարկան։ Սակայն դուման չը քննեց այդ հարցը, ի նկատի առնելով խնդրի լրջութիւնը և այն, որ ձայնաւորները կամեցան մանրամասն ծանօթանալ դպրոցական մասնաժողովի և վարչութեան զեկուցման հետ։ Այդ պատճառով դուման որոշեց՝ այդ հարցի քննութիւնը յետաձգել և առաջարկել վարչութեանը՝ տպագրել ամբողջ զրագրութիւնը և բաժանել ձայնաւորներին։

Այդ վճռից յետոյ, ձայնաւոր իշխան Ա. Արղուտինսկի—Դոլգորուկով, դիմելով քաղաքագլխին և մատնացոյց անելով «Кавказъ» լրագրի յօդուածի վրա՝ քաղաքային դպրոցների առիթով, ասեց, թէ այդ յօդուածում յարուցած հարցի մանկավարժական կողմը չը շօշափելով, ինքն գտնում է, որ յօդուածի հեղինակը փաստական կողմը ոչ միայն ճիշդ չէ արձանագրել, այլ և աղաւաղել է. այդ պատճառով, ձայնաւորի կարծիքով, քաղաքագլուխը պարտաւոր է վերականգնել ճշմարտութիւնը, հերքում տպելով լրագիրներից մէկի մէջ։

Քաղաքագլուխը պատասխանեց, որ ինքն, իր կողմից, անհրաժեշտ և մինչև անգամ օգտաւէտ է համարում մամուլի միջոցով հերքում տպել «Кавказъ» լրագրի յօդուածի դէմ։

ԱՌՕՐԵԱՅ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

—

Անդադար լսում ենք գանգատներ՝ թէ դժուար է այս անել, դժուար է այն իրագործել։ Մի տեղ հանգամանքներն են մեղաւոր, միւս տեղ պայմանները են արգելք հանդիսանում։—Սակայն, պէտք է խոստովանվել, ինչքան էլ շատ լինեն արգելքները, այնու ամենայնիւ կան բաներ, որ կարելի է անել, կան խնդիրներ, որ կարելի է լուծել։

Թողնենք մենք մի շարք գիւղատնտեսական-տեխնիկական բարեփոխութիւնների գործը, որը մենք, ընկերակցաբար թէ միայնակ, կարող էինք մտցնել մեր երկրի մէջ. թողնենք մեր մի շարք հասարակական-մարդասիրական հաստատութիւնների գործը, որը մենք կարող էինք հիմնել մեր ժողովրդի համար. թողնենք մեր մի ուրիշ շարք, նոյնպէս հասարակական բնաւորութիւն ունեցող,

կուլտուրական ձեռնարկութիւնները, թողնենք այդ բոլորը, և կանգ առնենք մեր հասարակութեան համար այժմ նշանակութիւն ունեցող մի քանի կէտերի վրա։

Մենք կարծում ենք, որ մեզ ոչ ոք չէ արգելում կարգի բերել, կարգի դնել մեր ունեցած հասարակական-ազգային հարստութիւնները. մենք խօսում ենք գլխաւորապէս մեր վանքերի կալուածքների մասին։ Մինչև այսօր մեր բոլորիս համար գաղտնիք է թէ մեր այդ կալուածքների չափը, և թէ նրանց այժմեան դրութիւնը։ Այն ինչ մենք Էջմիածնում ունենք տպագրական օրգան, ունենք այնտեղ այդ բոլորի վրա վերահասու-լիազօր մարմին, որոնց միջոցով մենք կարող էինք արձանագրել այդ կալուածքների չափն ու սահմանը, պարզել նրանց դրութիւնը և թէ, հարկաւոր եղած ղէպքում, միջոցներ առաջարկել նրանց կանոնաւորելու համար։ Այդ բոլորը միշտ և ամեն ժամանակ կարող էինք անել և դարձեալ չենք անում։ Այդ բոլորը անել հարկաւոր է մանաւանդ այժմ, երբ ժողովրդի միջից արդէն բաւական կտրուկ և լսելի են դարձել այն ձայները, թէ մեր հասարակական—ազգային հարստութիւնները, երկար ժամանակների ընթացքում ժողոված և դիզված հարստութիւնները, որոնք այժմ մեր վանքերի սեփականութիւններ են դարձել,—ենթակայ են ամենաղժբաղդ վիճակի.—կամ կամաց-կամաց կորչում և անհետանում են, կամ թէ մնալով առանց պատշաճ տնտեսութեան և կօնտրոլի, օրից օր սպառվում են և ոչնչանում։ Վաղուց ենք զգում այդ կալուածները կարգի բերելու անհրաժեշտութիւնը,—այնու ամենայնիւ ոչինչ չենք անում, ոչնչի չենք ձեռնարկում այդ պարզ խնդիրը հրապարակից դուրս բերելու համար։

Վերցնենք մեր ուսումնարանական խնդիրը։ Անկասկած է, որ ոչ ոք չէ արգելում խելացի հիմքերի վրա դնել մեր ուսումնարանները։ Փառք Աստուծոյ, մենք այժմ ունենք բաւական մեծ թվով ինտելիգենտ երիտասարդներ, զանազան մասնագիտութիւններ սովորած և զանազան ֆակուլտետներ վերջացրած, որոնց միջից կարող էինք ընտրութիւն անել մեր դպրոցների համար։ Մենք չենք կարծում, որ մեր դպրոցներում որոշ կարգ հաստատվելուց յետոյ, մեր երիտասարդներից շատերը չը համաձայնվէին մտնել աշխատանքի այդ շրջանը։ Եւ ինչ. փոխանակ օգտվելու ժամանակից ու մեր ունեցած ոյժերից, փոխանակ կանոնաւորելու դպրոցական այդ կարևոր խնդիրը, մենք ոչինչ կամ գրեթէ ոչինչ չենք անում։

Նոյն է և հոգևորականութեան խնդիրը։ Այն ժամանակ, երբ մեր պահանջները օրից օր լայնանում են և մենք խօսում ենք բարձր կուլտուրայի, քաղաքակրթութեան անունից, յաւակնում ենք մեր գրողներին, հրապարակախօսներին, վիպագիրներին, նկարիչներին, այլ և այլ հասարակական գործողներին համեմատել եւրօպական գրողների և գործողների հետ. այն ժամանակ, երբ մենք խօսում ենք զանազան «ուղղութիւնների» մասին մեր հասարակական կեանքի մէջ,—ճիշդ այդ ժամանակ հարց է դրվում և այն էլ հրապարակով.—հարկաւոր է, որ մեր հոգևորականները կրթված և զարգացած լինեն, թէ ոչ։ Մենք կարծում ենք, որ ամեն տեսակ հարց կարելի էր դնել և հրապարակային քննութեան ենթակայ դարձնել, բայց այդպիսի մի հարց—երբէք։ Այսպէս թէ այնպէս, հոգևորականութիւնը այժմ ահագին պատասխանատու դեր ունի կատարելու մեր մէջ և նրա անդամների ընտրութիւնը օրից օր աւելի լուրջ և խիստ պէտք է լինի։ Հոգևորականների դրութեան հետ կապված են մի շարք խնդիրներ, որոնց իրագործման ձեռնարկելը հնարաւոր կը լինի միմիայն բարոյապէս բարձր և մտաւորապէս լաւ պատրաստված հոգևորականների ձեռքով։ Ցգիտութիւնը, որը այժմ ներկայացնում է մեր հոգևորականութիւնը,—միայն վնասել կարող է և ոչ թէ օգնել։

Ահա հարցեր, որ արտասովոր չեն, անլուծանելի չեն, բայց և այնպէս մնում են չը վճռված, մնում են կարգի չը բերած։

Ա. Ղուլեանց

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Այն օրից, երբ Հիւսիսային Կովկասում երևացին նաւթի աղբիւրներ, պահանջ զգացվեց յարմարեցնել նաւթամշակութեան համար եղած օրէնքը նոր տեղի պայմաններին։

Նորերս հրատարակվեցին լրացուցիչ կանոններ, որոնցով Հիւսիսային Կովկասում հաստատվում է երկու կարգ՝ մէկը պետական հողերի վրա, միւսը կօզակների հողերի վրա։ Առաջինը նման է նախկին օրէնքին, երկրորդը մտցնում է մի քանի փոփոխութիւններ։ Կօզակների հողերի վրա եղած նաւթահանքի պաշտօնական հսկողութիւնը և կառավարութիւնը յանձնվում է նահանգական (օբլաստի) վարչութիւններին, իսկ տեխնիկականը—լեռնային վարչութեան։

Կօզակների հողի վրա գտնված նաւթահանքերը իրաւունք ունեն շահագործել թէ կօզակներ և թէ ուրիշ անձինք, բացի հրէաներից, լինեն դրանք ռուսահպատակ, թէ օտարահպատակ։ Օտարազգիներին թոյլ է տրվում շահագործել նաւթահողերը՝ միայն զինուորական մինիստրի իւրաքանչիւր անգամ յատուկ հաւանութեամբ։

Նաւթագործների վրա հարկ նշանակելը պէտք է լինի երկրագործութեան և զինուորական մինիստրի ընդհանուր որոշմամբ։

Նաւթաղբիւրներ գտնելու իրաւունքը տրվում է ամենքին, ազատօրէն, սահմանելով դեսեատինից մի որոշ տուրք, որ պէտք է լինի ոչ աւելի քան հինգ ռուբլի։

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Սեպտեմբերի 25-ին

Մեզանում երևացող զանազան տեսակ վարակիչ հիւանդութիւններից դուրս, յաճախ աչքի են ընկնում այնպիսի վտանգաւոր հիւանդութիւններ, որ ուշադրութեան արժանի են և ցանկալի կը լինէր, որ թէ հասարակութիւնը և թէ ադմինիստրացիան այդպիսի դէպքերում ամենախիստ միջոցներ գործ դնեն։

Վտանգաւոր հիւանդութիւններից սիբիրական խատը, ջրվախութիւնը և այլ վտանգաւոր հիւանդութիւնները Զանգեզուրի գաւառում ընդհանրապէս և մասնաւորապէս Գօրիսում եթէ ոչ յաճախ, գոնէ տարին մի անգամ պատահում են։ Դրան պարզ ապացոյց՝ նորերումս պատահած մի տխուր դէպք.—տեղիս ծառայողներից մէկի կատաղած շունը կծել է երեք գօրիսեցու. դրանցից մէկը պօստ-հեռագրատան ծառան է. միւսը՝ տարրական դպրոցի աշակերտ, իսկ երրորդը՝ շնատիրոջ ծառան։ Այդ երեքին էլ մի օրվայ մէջ է կծել։ Հարկաւոր է կծածներին անմիջապէս ուղարկել Թիֆլիս՝ Պատեօրի կայարանը՝ պատուաստելու համար։ Պօստ-հեռագրատան մասի կառավարիչը հեռագրել է իր վարչութեան, որ արքունական ծախսով ծառային ուղարկեն Թիֆլիս պատուաստելու։

Պէտք է ասած, որ Գօրիսի փողոցներում ահագին թիւով թափառող շներ կան, որոնք առանց տէրերի այստեղ այնտեղ ընկած են. դիշերները երկիւղալի է մինչև անգամ առանց փայտի մանգալ։ Լաւ կը լինէր, եթէ տեղական պօլիցիան և ադմինիստրացիան, իբրև նախազգուշական միջոցներ, գործ դնէին հետևեալ միջոցները. նախ՝ սպանել կատաղած և կասկածելի շներին. երկրորդ՝ սպանել այն կենդանիներին և մանաւանդ շներին, որոնց կատաղած շներն են կծել. երրորդ՝ կոտորել անխտիր կերպով բոլոր թափառող շներին. չորրորդ՝ ստիպել և պահանջել, որ շան տէրերը շներին հագցնեն դնչակալներ կամ թոկով կապեն. և հինգերորդ՝ պրիստաւների միջոցով հրամայեն տանուտէրերին, որ գիւղերում ջրվախութիւնով վարակված կենդանիներին կոտորեն։ Մեր գիւղական ժողովուրդը հաւանօրէն սկզբում թշնամաբար կը վերաբերվի այդ բոլորին,—բայց անկասկած շուտով կընտելանայ։

Ց. Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Մեծ-Ղարաքլիսա, սեպտեմբերի 26-ին

«Մշակի» № 63-ի մէջ յիշված և իմ անունով ուղարկած մի հարիւր ռուբլին ևս իր ժամանակին ստացայ և ամենաճիշդ ընտրողութեամբ և զգոյշ հետևողութեամբ, անձամբ բաժանեցի Մեծ-Ղարաքլիսայի շրջակայում գտնված հայ գիւղերի ամենաչքաւոր և ապրելու միջոցներից զուրկ ընտանիքներին՝ ոմանց դրամ և ոմանց ալիւր բաշխելով՝ հասանելի ոժանդակութեան գումարին համեմատ, նայելով նրանց չքաւորութեան աստիճանին և ընտանիքի անդամների թիւին. դրանց անուանական ցուցակը նամակիս հետ ուղարկում եմ խմբագրութեանդ։

Աւելորդ չեմ համարում ցուցակի համառօտութիւնը յիշել այստեղ, թէ՝ որ գիւղում քանի սովեալ ընտանիքի որքան դրամ է բաժանված, որ հետևեալն է՝ Սարմուսախլի գիւղում 17 տուն, 34 ռուբ. 50 կոպ., Հաջիղարայ 7 տուն, 18 ռուբ., Դարբաղ 5 տուն, 14 ռ., Եաղուբլի 11 տուն, 14 ռ., Ղշլախ 2 տուն 3 ռ. 50 կ. և Մեծ Ղարաքլիսա 11 տուն, 16 ռ. ընդամենը 53 տան բաշխած է 100 ռուբլի։

Այդ տեղեկութիւնների հետ յայտնելով մեծապատիւ նուիրատուներին և խմբագրութեանդ բոլոր կարօտեալների սրտաբուխ շնորհակալութիւնները և բարեմաղթութիւնները, իմ կողմից ներողութիւն եմ խնդրում, որ մի քանի արգելող հանգամանքների պատճառով տեղեկութիւնը այսքան ուշացրի։

Արսէն ա. ք. Տէր-Սիմէօնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից հեռագրում են սեպտեմբերի 30-ից հետևեալը. «Դեսպան Նէլիդով ճանապարհ ընկաւ դէպի Լիվադիա։ Նրան տուած ունկնդրութեան ժամանակ, սուլթանը ցաւ յայտնեց Թագաւոր Կայսրի հիւանդութեան առիթով և խնդրում էր դեսպանից Թագաւորի համաձայնութիւնն առնել՝ Լիվադիա ուղարկելու թիւրքաց մի միսսիա՝ ողջունելու Թագաւոր Կայսրին։ Եթէ բարեյաջող պատասխան կը լինի, միսսիան իսկոյն ճանապարհ կընկնի»։

Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ հոկտեմբերի 7-ին Աղրկովկասեան երկաթուղով Կարայազից վերադարձաւ իր կալուածքը՝ Բորժոմ։

Հոկտեմբերի 5-ին Կ. Պոլսից Թիֆլիս եկաւ Վանի ռուսաց փոխ-հիւպատոս Ֆ. Գրեազնով։

Այսօր, հոկտեմբերի 8-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում պէտք է քննվի խմբագիր Ս. Սպանդարեանի ապելացիական գանգատը Խ. Մալումեանի դէմ։ Վերջինի պաշտպանն է երդուեալ հաւատարմատար Զէմէսով։ Դատաստանական պալատի նիստը նշանակված է առաւօտեան 10 ժամին։

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Վեհափառ Կաթողիկոսը կոնդակով մեր ժողովրդական գրող Ղազարոս Աղայեանին տարեկան 400 ռուբլի թոշակ է նշանակել, դրանից 300 ռուբլին Էջմիածնի գումարներից, իսկ 100 ռուբլին իր անձնական գումարից։ Այդ 300 ռուբլու մասին վեհարանից դիմումն է եղել սինօդին, պաշտօնապէս կարգադրութիւն անելու մասին։

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Հայ գրողներին, մանկավարժներին և դիտնականներին օժանդակող ընկերութեան կանոնադրի ծրագիրը քննելու համար հոկտեմբերի 2-ին կայացած ժողովի շարունակութիւնը լինելու է կիրակի, հոկտեմբերի 9-ին, քաղաքային տան դահլիճում, երեկոյեան 7 ժամին»։

Ներքին գործերի մինիստրութիւնը միջնորդում է, որ գանձարանը փոխարինաբար բաց թողնի 132,344 ռուբլի՝ Թիֆլիսի արքունական թատրոնի շինութիւնը աւարտելու համար։

«Նոբէլ» ֆիրմայի գլխաւորը, Ե. Նոբէլ, ինչպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, հրաժարվեց Բաքուի նաւթարդիւնաբերողների ներկայացուցչի պարտաւորութիւններից Պետերբուրգում։ Ասում են, որ նաւթարդիւնաբերողները մտադրութիւն ունեն իրանց ներկայացուցիչ ունենալ Պետերբուրգում ի. Լազարեվին։

Նոյեմբերի 1-ին պետական բանկի բաժիններ պէտք է բացվեն Ասխաբադում, Ստավրոպոլում և Թէոդոսիայում։

Մենք ստացանք լուսանկար Սմբատեանից մի մեծադիր նկար, որ պարունակում է իր մէջ 1892 թի կաթողիկոսական ընտրութեան մասնակցող պատգամաւորների պատկերները։ Մէջ տեղը Վեհափառի պատկերն է, շուրջը աշխարհական և հոգևորական պատգամաւորների լուսանկարներ։ Մի քանի պատկերներ չեն մտել այդ ժողովածուի մէջ։ Պատկերը վատ չէ պատրաստած։ Գինը 3 ռուբլի է։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Կովկասի կառավարչապետը խնդրել է Ֆինանսների մինիստրից 80,000 ռուբլու կրեդիտ՝ Թէլաւի տրակտը ուղղելու համար։

—

Հոկտեմբերի 6-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում տեղի ունեցաւ Անդրկովկասեան երկրի հողաչափային կանոնադրութիւնը վերափոխելու համար կազմված յանձնաժողովի երկրորդ նիստը, արդարադատութեան մինիստրի օգնական Գօրեմիկինի նախագահութեամբ։ Յանձնաժողովի նպատակն է հողաչափութիւնը արագացնել և նրա տեխնիկական կողմը հեշտացնել։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 2-ին, կիրակի գիշեր, յանկարծամահ եղաւ Երևանում սինօդի անդամ Ներսէս վարդապետ Հայկազունի։ Ընթրիքից յետոյ, առաջնորդարանում, նա զգում է աղիքների գալարումն, և մինչև բժիշկ բերել տալը մեռնում է։ Երէկ, հոկտեմբերի 3-ին, Ներսէս վարդապետի մարմինը բերեցին այստեղ միաբանութեան գերեզմանոցում թաղելու։ Հանգուցեալը այրիացած քահանայ էր և վեղար էր ստացել Գէորգ կաթողիկոսի օրով։ Ունի երկու աղջիկ, մէկը ամուսնացած, միւսը ամուսնացնելու, և մի տղայ՝ ամուսնացած»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ամսիս 2-ին քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնն էր։ Ընտրվածները վրացիք են և ռուսներ։ Ընտրվածների մէջ չը կայ ոչ մի հայ»։

—

Հին-Նախիջևանի գաւառի ԱՋԱ գիւղից մեզ գրում են. «Ահա 3 ամսից աւելի է, որ դիֆտերիտ հիւանդութիւնը Վերին և Ներքին Ազայում և Դեր գիւղում զոհեր է տանում մատաղահաս երեխաներից. օրեկան 3—4 երեխայ են մեռնում. վերջին օրերումս, կարճ ժամանակամիջոցում, 60—70 երեխաներ զոհվել են անգութ հիւանդութեան։ Գողթան գաւառի չրջակայ հայաբնակ գիւղերը, լսելով մեր այդ դժբաղդութիւնը՝ համարեա ընդհատել են իրանց յարաբերութիւնները մեր գիւղերի հետ։ Ամբողջ գաւառում միակ խօսակցութեան առարկան մեր գիւղերի երեխաների ճանճերի պէս կոտորվելն է. դէպքեր կան, որ մի տանից 4—5 երեխայ միմեանց ետևից են վախճանվել։ Մեր գաւառական վարչութիւնը և բժիշկը ոչ մի ուշադրութիւն չեն դարձրել մինչև այժմ։ Զարմանալին այն է, որ անցեալ շաբաթները գաւառական բժշկի պաշտօնակատարը գործով երկու անգամ անցնում է մեր գիւղերի մէջով և լսում է, որ գիւղերի մէջ տարածված է դիֆտերիտ վարակիչ հիւանդութիւնը, բայց առանց խորհրդի և ուշադրութեան թողնում ու հեռանում է գիւղից։ Խեղճ գիւղացիք տեսնելով, որ ոչ մի տեղից օգնող չը կայ, սրբերի օգնութեանն են դիմում։ Բայց, դժբաղդաբար, աւելի լայն ծաւալ են տալիս զրանով վարակիչ հիւանդութեան։ Օրինակ, վերջին շաբաթներում, հիւանդութեան ամենաթոյլ դրութեան միջոցին, 3 անգամ գաւառի զանազան վանքերից աչեր և մասունքներ են բերել ու շրջեցրել գիւղերում, որի ժամանակ ժողովուրդը,—տղամարդ, կին, երեխայ, հիւանդ, առողջ—բոլորը գնում են մասունքների ետևից և ամեն մէկը՝ թէ առողջ և թէ հիւանդ, նոյն իսկ ամենածանր հիւանդը, անթիւ անգամ համբուրում են խաչերը և մասունքները, որով պատճառ են լինում հիւանդութեան աւելի արագ տարածվելուն»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Բասար-Գեչար գիւղում, երկու թուրք, գիշեր ժամանակ, խանութի դռնից գնտակահար անելով սպանում են մի հայ վաճառականին, նրա առևտրին նախանձելով։ Սպանողները բռնված են և գործը քննվում է»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ամսիս 4-ին, ծովում լողանալու ժամանակ, խեղդվեց մի շամախեցի հայ երիտասարդ՝ Բաբա Վլասեան ազգանունով, որը այստեղի նահանգական ատեանում գրագրի պաշտօն էր վարում։ Դիակը դեռ չէ գտնված»։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԱՊՕՆԱ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Անգլիական «Speaker» լրագրի վերջին համարում մի հետաքրքիր յօդուած է տպված եապօնա-չինական պատերազմի մասին։ Աղատամիտ լրագիրը քննում է կռւի հնարաւոր վախճանը և չինացիների ջարդվելու հնարաւոր հետեւանքները, որը, ըստ երևոյթին, անխուսափելի կարելի է համարել։ Լրագրի կարծիքով հասել է ժամը, երբ պէտք է եռանդուն կերպով գործեն եւրօպական պետութիւնները. բոլորն էլ ցանկանում են, որ շուտով խաղաղութիւն հաստատվի։

Անգլիայի գաղթականական շահերը, որոնք սերտ կերպով կապված են անգլիական ամբողջ արդիւնաբերութեան հետ, դրդում են անգլիացիներին աշխատելու, որ խաղաղութիւնը շուտով հաստատվի այնպիսի պայմաններով, որ Չինաստանը չը կորցնի իր քաղաքական անկախութիւնը։

«Մեր Արևելեան կայսրութեան համար,—ասում է «Speaker»,—մենք պէտք է լաւ յարաբերութիւններ պահպանենք Չինաստանի հետ և չը թոյլ տանք, որ նա ընկնի մեր հիւսիսային հարեւանի իշխանութեան տակ։ Մենք պէտք է պաշտպանենք Չինաստանը այնպիսի անկումից, որ նա չը ստիպվի Ռուսաստանի օգնութեանը դիմել, ինչպէս այդ տեղի ունեցաւ 200 տարի առաջ մեր հարեւանների վերաբերմամբ։»

Լրագիրը յոյս ունի, որ պատերազմը կը վերջանայ այդ հիմունքներով մինչև ձմեռը։ Այդ նպատակով «Speaker» խորհուրդ է տալիս «բարոյական ազդեցութիւն» գործել պատերազմող կողմերի վրա՝ մեծ պետութիւնների միացեալ նաւատորմերի օգնութեամբ։ Այդ կարծիքը հետաքրքիր է, որպէս արտայայտութիւն անգլիական ազատամիտ շրջաններում տիրապետող հայեացքի։ Այդ տեսակէտից շատ հետաքրքիր է «Speaker» լրագրում տպված յօդուածի վերջը։ Լրագիրը չէ համակրում Չինաստանի բաժան բաժան լինելուն. դա արևելքում, ասում է նա, կը ստեղծէր մի տեսակ բալկանեան իշխանութիւններ, որոնք օտար դիպլոմատիայի անվերջ ինտրիգների ասպարէզ կը դառնային։ Աւելի խելացի կը լինէր, լրագրի կարծիքով, Չինաստանում անգլիացիներին այն դերը տալ, որպիսի դեր նրանք կատարում են Եգիպտոսում կամ Հնդկաստանում, թէպէտ, ի հարկէ, շատապում է աւելացնել անգլիական լրագիրը,—«Մենք չենք ցանկանում մեր ուսերի վրա բարձել էլի մի նոր ծանրութիւն, որպիսին է աշխարհիս ամենաբազմամարդ և ամենայամառ աղգաբնակութեան կառավարելը։»

Այն ինչ արևելքից ստացվող տեղեկութիւնները շատ անորոշ են։ Լրագիրները լի են հակասող տեղեկութիւններով եապօնական նաւատորմի շարժման մասին։ Այն ժամանակ, երբ գերմանական լրագիրների հեռագիրները պնդում են, որ եապօնական 70 նաւեր երևեցան Պէշիլիական ծովածոցի մուտքի մօտ, ուրիշ տեղեկութիւններից երևում է, որ անհնարին է այնտեղ մտնել, առանց լուրջ ընդհարում ունենալու չինացիների հետ։ Թէպէտ նորերս ստացված հեռագիրները ասում են, թէ 40 հազար եապօնացիներ արդէն ափ իջան Շան-Խայ-Ցուանում, այսինքն համարեա Պէկինի մօտ, բայց շատ հաւանական է, որ այդ տեղեկութիւնը, ինչպէս և ուրիշները, ենթադրութիւններ են։

ՊԱՍՏԵՈՐԻ ՆԱՄԱԿԸ

—

Այն ժամանակից, որ բժշկապետ Բու զեկուցում արաւ Բուդապէշտի կենդրէսում դիֆտերիտի բժշկութեան մասին, Պաստեորի ինստիտուտը, ուր աշխատում է բժշկապետ Բու, սկսեցին բազմաթիւ նամակներ տեղալ, որոնցով ծնողները խնդրում էին դիֆտերիտի դեղը։

Պարիզի «Figaro» լրագրի վերջին համարում Պաստեորի հետեւեալ նամակն է տպված լրագրի խմբագրին. «Դուք յայտարարեցիք ձեր լրագրում այն անգնահատելի ծառայութեան մասին, որ մարդկութեանը մատուցեց իմ թանդագին աշխատակից բժշկապետ Բու։ Դուք դիմեցիք մայրերին խնդրելով նպաստել այն միջոցի տարածմանը, որը պէտք է մահվան ճանկերից խլի հազարաւոր երեխաներին։ Ձեր հրաւէրը ոչ միայն լսելի եղաւ, այլ և սրտաշարժ է ինձ համար տեսնել, որ մանուկներն են կանգնած նուիրատուների առաջին շարքում։ Այդպիսով նրանք կեանքի ասպարէզը մտնում են՝ բարի գործելով։ Վրաստանի ծնողները յիշելով իրանց մեռած երեխաներին, նուիրատուութիւններ են անում ուրիշ երեխաների կեանքը ազատելու համար։ Ֆրանսիայի ամեն ծայրերից ամենքն էլ շտապում էին միանալ համերաշխութեան և բարերարութեան այն զգացմունքին, որ դուք առաջ բերիք մամուլի և հասարակութեան մէջ։ Ես իմ կողմից և գիտութեան, հայրենիքի և մարդկութեան համար աշխատող իմ աշխատակիցների կողմից շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ։ Լ. Պաստեոր»։

ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

—

Վերջին ժամանակներս մի տեսակ սառնութիւն է նկատվում անգլիական ազատամիտների մէջ դէպի Իրլանդիայի գործերը։

Իրլանդացիները, օրինակ, ստորագրութիւն բացարին յօդուտ իրանց ազգային դրամարկղի։ Ժողովարարութեան թերթերը յայտնի չէ թէ ինչ ճանապարհով ստացել էին Գլադստոն և լորդ Տվիդմուտ, որոնք հարիւր ֆունտ ստերլինգ ուղարկեցին կասսային։ Իրլանդացիները հնարաւոր չը համարեցին ընդունել այդ նուիրատուութիւնը։

Իրլանդական լիգայի գլուխ Օբրայէն վերադարձրեց ուղարկած փողը հետեւեալ նամակով. «Իրլանդական կուսակցական ֆոնդին փող ուղարկելու շրջաբերականը դուք սխալմամբ էք ստացել, առանց կուսակցութեան լիազօրութեան. այդ պատճառով ես ստիպված եմ վերադարձնել ձեզ ձեր փողը, թէպէտ և չեմ կարող երախտագիտութիւն չը յայտնեց ձեզ՝ հօմրուլի գործին ձեր ցոյց տուած գործնական համակրութեան համար»։

Գլադստոնին ուղարկած այդ պատասխանի մէջ դեռ մի փոքր ներողամտութիւն է նկատվում դէպի մեծ ծերունին։ Աւելի էլ խիստ վերաբերվեցին իրլանդական ազգասէրները դէպի այժմեան մեծ մինիստրը, ասելով, թէ մեծ մինիստրը, ինչպէս երևում է, դադարել է հասարակական գործերով զբաղվել։

Իրլանդական առաջնորդներից մէկ ուրիշը, Միկէլ Դէվիտ, աւելի հեռու գնաց և յայտարարեց, որ իրլանդացիները դիտաւորութիւն ունեն համաձայնութիւն կայացնել սոցիալիստների և Անգլիայի բարձր դասակարգերի թշնամիների հետ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, սեպտեմբերի 13-ին

Դժար է իսկապէս լինել Թաւրիզի թղթակից, պարտաւորված լինելով նկարագրել, չօշափել շարունակ միատեսակ անմխիթար և յուսահատական հարցեր, որովհետև մխիթարական ոչինչ չը կայ։ Հասարակական հարցերը մեծ մասամբ կապված լինելով մի և նոյն անձնաւորութեան հետ, ակամայից ստիպված ենք ամեն մի հարց չօշափելիս՝ որոնել նրա սկզբնապատճառը, որը անպայման պէտք է կապված լինի նոյն անձնաւորութեան հետ...

Ցիրաւի, մխիթարական ինչ կարելի է որոնել մի հասարակական կեանքում, որի ղեկավարողը պատկանում է այնպիսի մարդկանց շրջանին, որոնք իրանց հետ կարող են տանել մեռելային ամլութիւն միայն և որոնց գործունէութեան ամենաբարձր կէտը, նշանաբանն է՝ «Օգուտ ինձանից մի սպասէք, այլ բաւականացէք չը տուած վնասով...» *) Եթէ վերոյիշեալ խօսքերը պատկանում են այդ ուղղութեան նահապետին, ինչ կարելի է սպասել նրա փոքրաւորից, որը հրապարակապէս ասում է միշտ. «Ես արժանի չեմ նրա գերեզմանի ս. հողը լիզելուն»։

Մեր խօսքը վերաբերում է Արամեան դպրոցի հոգաբարձութեան նախագահին։ Գուցէ մենք զրբախտութիւն չունենայինք այդ անձնաւորութեան հետ անմիջական կապ ունեցող հարցերը զետեղել «Մշակի»-մէջ (հաստատապէս համոզված լինելով, որ հայ հասարակութիւնը վաղուց ճանաչում է նրան և գիտէ թէ ինչ կարելի է սպասել Նրանից), եթէ նա արժանաւոր աշակերտ լինէր իր հանգուցեալ հոգեհոր և հետեւէր նրա ասածներին, թէ «բաւականացէք չը տուած վնասներով»... Այո, մենք օգտակարութեան ոչ մի ակնկալութիւն չունենք. բայց երանի թէ վնասներ չը լինէին. սակայն Ազգապատանի հայոց այս մի տարվայ ընթացքում կրած վնասները այնքան շատ են, որ չէ կարելի աչքաթող անել։

Այս մի տարվայ ընթացքում, շնորհիւ նախագահի անհոգ և անխոհեմ գործունէութեան, Ազգապատանի հայը զրկվեց իր դարևոր արտօնութիւններից, արտօնութիւններ, որոնք ոգիպսի զբաղուարութիւններով էին ձեռք բերված... Այս մի տարվայ ընթացքում Ազգապատանի հայը զրկվեց իր տասնեակ տարիներով վայելած խաղաղ և անդորր կեանքից, ենթարկվելով բազմաթիւ սպանութիւնների, անթիւ հարատահարութիւնների, աւարառութիւնների և հարևան ազգերի թշնամանքին։ Այս մի տարվայ ընթացքում Ազգապատանի հայ ժողովուրդը կորցրեց դարերով ձեռք բերած՝ պարսից կառավարութեան վստահութիւնը և դրա փոխանակ ենթարկվեց կասկածանքի։ Կորուստ կորստի ետեւից մի տարվայ ընթացքում և այդ բոլորը շնորհիւ մի անձնաւորութեան անփոյթ և անխոհեմ գործունէութեան։

Ի հարկէ ցաւելով, բայց և այնպէս չենք կարող չը մեղադրել և մեր հասարակութեան, որը բազմաթիւ բացասական փորձերից չը խրատվելով՝ դեռ թոյլ է տալիս իրան ոչխարային հլութեամբ հետեւել այնքան մեծ չարիքների պատճառ եղող անձնաւորութեան թիւր խորհուրդներին և լիազօր հաւատարմատար կարգել նրան իրան վերաբերող բոլոր հարցերին։ Մենք թերևս չը մեղադրէինք հասարակութեան, եթէ նա ստիպված լինէր այդպէս անել, եթէ նա չունենար այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ծանօթ լինէին տեղական հանգամանքներին, և որոնք գործնականապէս ապացուցած չը լինէին իրանց կարողութիւնը։ Ողորմելի ժողովուրդ. լոյսը թողած՝ խաւարի մէջ է որոնում լոյս։

Արամեան դպրոցի նախկին հոգաբարձական մարմինը, երեք տարվայ իր եռանդուն և օգտակար գործունէութեամբ ապացուցեց, որ ինքը ընդունակ է ազգային հարցերին կանոնաւոր լուծումն տալ, կառավարութեան և օրինաւոր պաշտօնեաների վստահութիւնն ու համակրանքը շահել և օրինաւոր արդունք ցոյց տալ՝ ազգային արտօնութիւնները աւելի ամրապնդելով։ Մինչ այդ լուրջ անձնաւորութիւնները ասպարէզից կամովին կը հեռանային, եթէ ի նկատի չունենային՝ թէ ում հետ են ստիպված գործել։ Եւ մինչ այդ յարգելի պարոնները այսօր իսկ մասնաւորապէս պատրաստ չեն՝ թէ բարի խորհուրդներով և թէ գործով օգնել իրանց դիմողներին...

Ազգային շատ հարցերի հետ միասին՝ կրթական գործն էլ խաղալիք է դարձել մի անձնաւորութեան համար. և ինչ կարելի է սպասել մէկից, որը միշտ խոյս է տուել լոյսից, գիտութիւնից, իր բոլոր պակասակելի թերութիւնները խաւարով սքողելու համար... Ամբողջ Սալմաստի համար գաւառական տեսուչ նշանակվել է մի անձնաւորութիւն, որը ոչ թէ միայն տեսչական արժանաւորութիւններ չունի, այլ և հասարակ դպրոցական ուսուցիչ լինելու ոչ մի արժանաւորութիւն։ Նրա միակ արժանաւորութիւնը, որի շնորհիւ և կարողացաւ տեսչական ծանր պաշտօնը ձեռք բերել՝ ընտոր պակվիլներ գրելն էր զանազան արժանաւոր մարդկանց և լրագիրների հասցէին, որոնց չէ համակրում հոգաբարձութեան նախագահը։ Այդ պարոնն էր, որ իրան թոյլ էր տուել արտասահմանեան փայլուն սկիզբ և տխուր ապագայ ունեցող մի թերթի մէջ ամենատոր լուտանքներ ուղղել Կովկասի ամենալուրջ հայ լրագրին՝ «Մշակին», և այդ բոլորը նախագահին հաճոյանալու համար։ Այժմ այդ պարոնը զբաղված է ուսուցիչներին հարատահարելով։

Զ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հռոմից «Paris» լրագրին հաղորդում են հետեւեալը. «Եզուիտների օրդէնի գեներալը մի յիշատակագիր ներկայացրեց պապին, որի մէջ խընդրում է նրան մեծ պետութիւնների վրա ներգործել այն մտքով, որպէս զի նրանք միջամտեն չինա-եապօնական պատերազմում և ստիպեն պատերազմող կողմերին հաշտութիւն կայացնել։ Ցիշատակագրի մէջ, ի միջի այլոց, շեշտված է այն բանը, որ պատերազմը ահագին վնաս է տալիս եզուիտների ընկերութեանը, որը Չինաստանում մեծ կալուածներ ունի և առևտրական ահագին գործունէութիւն։»

—«Times» լրագրի խօսքերով, չինացի հարուստ վաճառականներ և առևտրականներ ամեն օր խումբերով հեռանում են Պէկինից։

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ իշխան Բիսմարկ Վարցինից այս տարի աւելի վաղ կը փոխադրվի Ֆրիդրիխսրուէ։

—Ֆրանսիայում շարունակվում են յարձակումները հանրապետութեան նախագահ Կազիմիր Պէրիէի վրա։ Նա Շատոդէնում ներկայ էր զօրախաղերին, ճառեր խօսեց այնտեղ, բայց հասարակութիւնից շատ սառն ընդունվեց։ Ամենից շատ յարձակվում է Կազիմիր Պէրիէի վրա արտատական մամուլը, որին այժմեան նախագահը առելի է երկու պատճառներով,—որ նա, նախ և առաջ, իբր թէ Օրլէանների կուսակից է և երկրորդ՝ որ շատ հարուստ է։ Մինչև անգամ այն ընտրողական շրջանում, որի ներկայացուցիչն էր Պէրիէն պատգամաւորների ժողովում, նրա թշնամիները յաղթութիւն տարան. նրա տեղը ընտրվեց ոչ թէ չափաւոր հանրապետական, այլ արմատական պատգամաւոր։ Պարիզի կոմունայի նախկին պատգամաւոր Վալիան, «Petite Republique» լրագրում մի յարձակողական յօդուած տպեց հանրապետութեան նախագահի դէմ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անտվերպէնի ցուցահանդէսում ռուսաց էկսպօնէնտները ութսուն պարգև են ստացել։ «Свѣтъ» լրագիրը, չեշտելով այդ փաստը, ասում է, որ ութսուն պարգևը մի պատկառելի թիւ է և անկասկած մեր ազգային ինքնասիրութիւնը շոշոփում։ Բայց,—աւելացնում է լրագիրը,—դիժբաղդաբար, ռուսաց էկսպօնէնտներին տրված պարգևների յարաբերական թիւը մի փոքր սառը ջուր է ածում այդ ինքնասիրութեան վրա։ Եւ իրաւի, բանից դուրս է գալիս, որ պարգևների կէսը—40-ը—տրված է մեր օգտագործական արդիւնքների համար։ Դա մի փոքր օտարոտի է։ Թէպէտև Ռուսաստանում խմել սիրում են, բայց միթէ ցուցահանդիսում մենք աչքի ընկանք միայն... օդիով։ Օրինակ, կաշի համար տրվել են 12 պարգևներ, ծխախոտի համար—10 պարգև, քիմիական արդիւնքների համար—8 պարգև, տնայնագործական արդիւնքների համար—1 պարգև, շաքարի համար 1 պարգև։ Ուրեմն, ասում է լրագիրը, քառասուն պարգև օդիի համար և մէկ պարգև տնայնագործութեան արդիւնքների համար։ Քառասունը օդիի համար և ութը գիտական առարկաների համար։ Բացատրութիւնները աւելորդ են։»

*
* *

Պետերբուրգի առևտրական դատարանի դահլիճներից մէկում, գրում են Պետերբուրգի լրագիրները, սեպտեմբերի 28-ին տեղի ունեցաւ արժանայիշատակ մարդիկ Դէլաֆար և ընկ. բանկային գրասենեակի պարտատէրերի ժողովը։

Հաւաքվեցին նոյն անձինք՝ պ. Սեմենիչ իր երկու հարիւր հազար ռուբլի պահանջով և գրասենեակի ծառայողները՝ 400 ր. գումարի պահանջով։ Մինչև այժմ նոր պարտատէրեր չեն յայտնվում։ Ծառայողների թւում ժողովին եկել էր և մի համարեա տաս տարեկան աղջիկ։ Նկատելով նրան, երդուեալ հոգաբարձուն մինչև անգամ բացականչեց.

—Դա ով է։

—Դա էլ «պարտատէր» է. նա բանկային գրասենեակից 9 ռուբլի ստանալիք ունի, պատասխանեցին գրասենեակի ծառայողները։

Դրանից յետոյ սկսեցին գործերը քննել։

—Մենք, պարոններ, պէտք է վճռենք, թէ արդեօք պէտք է մնանք Շապիրովի բնակարանում. այժմ այդտեղ իրեղէններ կան. եթէ բնակարանը դատարկենք, մեզ, այնու ամենայնիւ, բնակարան է հարկաւոր, և տեղափոխութեան ժամանակ էլ շատ իրեղէններ կը կորչվեն. աւելի լաւ չի՞ լինի բնակարանը պահել մինչև նոյեմբերի 1-ը,—առաջարկեց գլխաւոր պարտատէրը։

—Պահել, պահել,—համաձայնվեցին բոլորը։

—Այժմ դուք պէտք է յարգէք երդուեալ հոգաբարձուների միջնորդութիւնը։ Նրանք 400 ր. են պահանջում գործավարութեան ծախսերի համար։

—Ինչպէս թէ գործավարութեան,—մի փոքր չիոթվեցին մանր պարտատէրերը։

—Կոնկուրսների ժամանակ միշտ այդպէս է լինում։ Այստեղ դեռ փոքր գումար է պահանջվում,—հանգստացրեց առաջարկողը։

—Դէհ, տալ, ինչ անենք, եթէ հարկաւոր է,—պատասխանեցին հանգստացածները։

Բոլոր գործերը դրանով էլ վերջացան։ Մինչև այժմ դեռ գաւառներից ոչ մի պահանջ չէ ստացել մնանկացած գրասենեակի երդուեալ հոգաբարձուն։ Ընդհակառակն, գաւառական կլիէնտները շարունակում են փողեր ուղարկել։

—Ես այսօր կերթամ մօտ 150 ծրարներ ստանալու,—ասում էր ժողովում հոգաբարձուն։

Սակայն մի քանի ծրարներ էլ ստացվում են և այնպիսի անձերից, որոնք գիտեն, թէ գրասենեակը արդէն փակված է։ Այդ փողերը ուղարկվում են, յուսալով ստանալ այն տոմսակը, որի նումէրը նշանակված է գրասենեակի տուած ստացագրի մէջ։

«Դա վերջին վճարն է, ես այժմ իրաւունք ունեմ տոմսակ ստանալ»,—գրված է համարեա փոքրով ուղարկած իւրաքանչիւր նամակում։

Իզուր յոյս...

---

*) «Մի երես մեր նորագոյն պատմութիւնից» Ղ. Ա. եր. 38.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 հոկտեմբերի։ Երէկ Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Եօսիֆօվնա յունաց թագուհու հետ միասին գնաց Սեվաստոպոլ։ —Երէկ, Մարիինսկի թատրոնում ներկայացումներ սկսելու ժամանակ, «Жизнь за Царя» օպէրայի երկրորդ գործողութիւնից յետոյ, միաձայն և անսպասելի կերպով պահանջվեց ժողովրդական օրհներգի կատարումը. երեք անգամ կատարվեց օրհներգը, որը ջերմեռանդութեամբ լսեց ոտի վրա կանգնած հասարակութիւնը։ Մրավինա և Դոլինա տաղանդաւոր դերասանուհիներին և երգիչ Կորեակինին հասարակութիւնը մեծ ցոյցեր արաւ։ Երկու դերասանուհիներին ևս թանգագին ընծաներ տուեցին։

ԱԹԷՆՔ, 5 հոկտեմբերի։ Ուէլսի իշխանը իր համար բնակարան պատուիրեց «Hotel St. George»-ում, Կորֆում. թագաւորին սպասում են եկող շաբաթ. Աթէնք գնալու ժամանակ, ճանապարհին, թագաւորը կը մնայ Կորֆու։

ԼՕՆԴՕՆ, 5 հոկտեմբերի։ Լուր է պատում, որ եապօնացիները գրաւեցին Արտուր նաւահանգիստը։

ՏՈՒԼՕՆ, 5 հոկտեմբերի։ Ֆրանսիական զրահակիր նաւը կերթայ Կորֆու։

ՊԱՐԻԶ, 5 հոկտեմբերի։ Հրատարակված է ուլտիմատում, որը կը յանձնվի Մադագասկարի կառավարութեանը, հաւանների դիմադրութեան պատճառով, որոնցից պահանջվում է. 1) Ֆրանսիայի իսկական հովանաւորութիւնն ընդունել Մադագասկարի վրա՝ քաղաքային և դիպլոմատիական բոլոր հետևանքներով, 2) Տանանարիվայի գրաւումը ֆրանսիական մշտական բերդապահ զօրքով և 3) պատասխան ութ օրվայ ժամանակամիջոցում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի։ Բիւլլետէն թագաւոր Կայսրի առողջական դրութեան մասին հոկտեմբերի 5-ին, երեկոյեան 11 ժամին. «Թագաւորի առողջական դրութիւնը վատանում է. ընդհանուր թուլութիւնը և սրտի թուլութիւնը մեծանում է»։ Բիւլլետէնը ստորագրեցին՝ պրոֆէսոր Լէյդէն, պրոֆէսոր Զախարին, վիրաբոյժ Հիրշբժշկապետ Պոպով, պատւաւոր լեյբ-վիրաբոյժ Վէլիամինով։—Պաշտօնապէս։ Հէսսէնի Ալիսա պրինցեսին մեծ առաջադիմութիւններ է անում ռուսաց լեզուի ուսումնասիրութեան մէջ. անցեալ ամառվայ ընթացքում Նորին Բարձրութիւնը մեծ աշխատասիրութեամբ զբաղվում էր ուղղափառ եկեղեցու հետ ծանօթութեամբ։ Պարապմունքների աջող աւարտումը, ապագ քահանայ Եանիշևի ղեկավարութեամբ, հնարաւորութիւն տուեց վերջինին դալ այժմ Լիվադիա Օգոստափառ երեխաների կրօնուսոյցի պարտաւորութիւնները կատարելու համար։—Ներքին գործերի մինիստրը վերադարձաւ Պետերբուրգ և ձեռք առաւ մինիստրութեան կառավարութիւնը։

ՊԱՐԻԶ, 6 հոկտեմբերի։ Նախագահ Պէրիէ Պաստէորի ինստիտուտը ուղարկեց 5000 ֆրանկ ֆրանսիացի բժիշկ Ռուի գտած հակաղիֆտերիտային դեղը տարածելու համար։

ԿԱԼԿՈՒՏՏԱ, 6 հոկտեմբերի։ Լագորական մի լրագիր հաղորդում է, որ իբր թէ աւգանական էմիրը վախճանվեց. այդ լուրը պարունակում է մինչև անգամ մանրամասնութիւններ էմիրի կեանքի վերջին ժամերի մասին։ Իր որդուն, Խաբիլ Ուլլախիին, էմիրը կտակեց հաւատարիմ մնալ Անգլիային։

ՏԱՇԿԷՆՏ, 6 հոկտեմբերի։ Այսօր հասաւ այստեղ երկրագործութեան մինիստրը, քննեց գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդէսը. մի քանի պարգևներ են նշանակված։

ԲԵՐԼԻՆ, 6 հոկտեմբերի։ Հէսսէն Դարմշտատեան մեծ դուքսը և մեծ դքսուհին Դարմշտատից ճանապարհ ընկան Պետերբուրգ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ Բիւլլետէն Նորին Կայսերական Մեծութեան առողջական դրութեան մասին հոկտեմբերի 6-ին երեկոյեան 7 ժամին։ Թագաւոր Կայսրի առողջական դրութեան մէջ փոփոխութիւն չը կայ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցանկացողները պէտք է իրանց երգերը, բանաստեղծութիւններն ու ոտանաւորները աշխատեն ուղարկելու, „ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ ազգային լիակատար երգարանի մէջ հրատարակելու համար, մինչև նոյեմբերի 15-ը ներկայ թվի, հետևեալ հասցէով. Свящ. Григорію Григоріанцъ, Баку.
(№ 116) 1—2

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ, պատրաստելով ՄԵԾ ԵՒ ՄԻԶԱԿ տեսակ, ի վաճառ է հանված, մեծը 3 ՐՈՒԲԼՈՎ հատը, միջակը 1 ր. 50 կոպէկով։ Գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել՝ Թիֆլիս, Արտեմ Աստուածատուրեան Արարատեանցին, Грибоѣдовская ул. д. № 40.
Գաւառներից ուզողներին յարմար է ուղարկել առանց կարդօնի, ճանապարհածախսի թերեւութեան համար, մի և նոյն գներով։
Լուսանկար՝ Սմբատեանց
(№ 115) 2—3

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ ԵՒ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆԻՑ
ՍԱՊՕՆ
պրոֆիզոր
Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ
Կատարելապէս ոչնչացնում է գըլխի թեփը, նպաստում է մազերի կանոնաւոր աճմանը և իսկապէս դադարեցնում է նրանց թափվելը։
Իւրաքանչիւր կտորի գինը 30 կոպ.։ Երկու կտորանոցի գինը 50 կոպ։
Կեղծումներից խուսափելու համար պահանջեցէք իսկական սապօն, որը արկղի վրա կառավարութիւնից հաստատված մարկա ունի № 3374.
Ծախվում է ամեն տեղ։ Պահեստ, Մոսկվա, Լեալին փող. սեփական տուն։
(№ 23) (չ.) 20—20

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ“
ԳԻՐՔԸ
ցոբելեարի երկու պատկերով։
Խմբագրեց Ա. Ծատուրեան, հրատարակ. Ց. Տէր-Յակոբեանի
ԳԻՆՆ Է ՄԷԿ ՐՈՒԲԼԻ։
Վաճառվում է յօգուտ ապագայ „Շահազիզեան գրականական ֆոնդի“։ Ցանկացողները դիմում են հրատարակչին՝ Москва, Верхніе Торговые Ряды, контора И. Н. Теръ-Акопова, №№ 222—223, կամ Баку, контора И. Н. Теръ-Акопова.
(№ 116) 1—5

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104
Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թվին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում
Առաջարկում է նոր պատրաստած
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . . „Театральныя“. . . . . „Флора“. . . . . } 10 հատը 5 կոպ.
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.
Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մոտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։
(№ 104) 0—3

Ի ԵԱ· ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ
Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։
Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՁԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։
Ուսուցանում է։
ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Վճար { Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։
(№ 16) (չ) 30—100

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական ցնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիզօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 32—32

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.
„ՐՕՍՍԻԱ“
Ապահովագրական ընկերութեան մէջ
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։
Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5.000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեակն պրէմիա 30 ր. 80 կոպէկ։
Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. գումարների մէկ անձի կեանքի համար։
Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։
Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն։
Յունվարի 1-ին 1894 թվի «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։
Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։
Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թվի համար—12% է։
Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։
(№ 85) 10—15

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Октября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 888.